




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

636.5

7-31

Ի. Ա. ՊԱՏՈՒԿ

ԿՈՒՆԵԿՏԻՎ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՐՈՍԿՎԱ

1931

17 JUL 2013

636.15

7-31

01 OCT 2010

Թարգմ. Ն. Տ.-Լ.

Главлит № А—72.781 Заказ № 2342 Тираж 4.000 экз
 Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,
 Шлюзовая набережная, 10.

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր գյուղական տնտեսության մեջ տնային թռչունները, մանավանդ հավերը, շատ չնչին բացառությամբ, ապրում են առանց վորեն հսկողության, մինչդեռ թռչնաբուծությունը գյուղական կյանքում խիստ կարևոր մի գործ է։ Նույնիսկ այժմյան անուշադրության մատնված հավը, վորը ինքն է ճարում իր կերակուրը վորտեղ վոր պատահի, — բակում, ամբարների առաջ ու գոմերում և գիշերում է, ինչտեղ վոր պատահի, — վորպես վաճառքի առարկա տալիս է հարյուրավոր միլիոն ձու, ել չենք խոսում հավի մսի սննդարարության և արժեքավոր լինելու մասին։

Անխնամ հավը տալիս է տարեկան 40—50 ձու, մինչդեռ կարող է տալ առնվազն յերկու անգամ ավելի, յեթե անխնամ չմնա, չկերակրվի նրանով, ինչ վոր ձեռքն է ընկնում, պատշաճ խնամք տարվի վրան և ողտվի մշտապես խնամքով և ուշադրությամբ։ Այս ամենը անկարող է անել գյուղացիական անհատական տնտեսությունը։ Կոլեկտիվ տնտեսությունը հաջողությամբ կարող է ապահովել տնտեսության մեջ կանոնավորապես թռչնաբուծության գործը։

Մենք պետք է ավելացնենք թռչնաբուծության արդյունքը, կուլտուրական պայմաններ ստեղծենք թռչունների գոյության համար և բարձրացնենք նրանց արդյունավորությունը մինչև հնարավոր չափը։

Այդ խնդիրը իրագործելի յե բացառապէս խոշոր ու կոլեկտիվ տնտեսութեան պայմաններում: Գործի կանոնավոր վարելը գյուղացիական անհատական տնտեսութեան ուժերից վեր ե:

Համը լալ ձու ածող կարող ե լինել միայն այն ժամանակ, յերբ ունի չոր, տաք, լուսավոր, ոդանցք ունեցող, բայց միջանցիկ քամիներից պաշտպանված բնակարան, ստանում ե պատշաճ սնունդ և վոչ թե ապրում ե նրանով, ինչ վոր ինքն ե ճարում, չի տանջվում հիվանդութեաններից ու զանազան պարսպապիտներից, մի խոսքով՝ յերբ կանոնավոր խնամք ե տարվում նրա վրա և պատշաճ սնունդ ե տրվում նրան:

ՃՈՒՏ ՀԱՆԵԼԸ


Լալ, կանոնավորապէս զարգացած ածան հալ կարող ե ստացվել միայն այն ժամանակ, յերբ նա ծնվում ե գարնան առաջին կիսում: Թխականները սովորաբար թուխս են նստում ուշ գարնանը և ուշ ել ճտեր են հանում, վորոնք չեն կարողանում, ինչպէս հարկն ե, պնդանալ մինչև ձմեռը (նկ. 1): Այդ տե-



Նկ. 1. Թխականը անհատական տնտեսութեան մեջ:

սակ ճտից ել առաջ ե գալիս չզարգացած, սակավարդյուն ածան հալ: Միայն ինկուբատորի* միջոցով կարելի յե ստանալ ճտեր՝ վաղ գարնանը: Ինկուբատորը ճտեր կարող ե հանել ամեն ժամանակ, բայց նա չափազանց թանկ ե անհատական տնտեսութեան համար (150 ձվի ինկուբատորը արժե 130 ուրլի): Ինկուբատորը չի յել կարող անհատական տնտեսութեան մեջ լիովին բեռ-

* Ինկուբատոր կոչվում ե այն մեքենան, վորը արհեստական կերպով ճտեր ե հանում:



Նկ. 2. Ինկուբատոր 23.040 ձվի համար. մեքենան ունի զարգծված վաճառող վառարան:

նավորությամբ աշխատել: Մի տնտեսության մեջ թուխի ժամանակ անկարելի չե լինում հավաքել այնքան ձու, վորջան հարկավոր ե ինկուբատորի ամբողջովին ըանեցնելու համար, վորովհետև 10 որվանից հին ձվերը այլևս անպետք են ձտեր հանելու համար: Ինկուբատորը ձեռնառու չե միայն մեծ թռչնաբուծական տնտեսության, միայն կոլխոզի համար (նկ. 2):

Մոսկվայի մոտ, Պոդոլսկի գավառում, կա «Հերոլդ» կոմունան, վորը ունի ինկուբատոր միանգամից 8400 ձվի համար: Գարնան ընթացքում այդ ինկուբատորը գործի չե դրվում վոչ պակաս, քան յերեք անգամ և գտնվում ե առանձին շինության մեջ: Ինկուբատորին ծառայում ե հատկապես նշանակված մի կոմունար կին: Կոմունան ստանում ե վաղ գարնանը ձտեր, վորոնք մինչև ձմեռ դառնում են լավ ածան հավեր: Մի գարնան ընթացքում այդ ինկուբատորը ընդունում ե իր մեջ մինչև 25.200 ձու: Յեթե հարկավոր լիներ ձտեր հանել վոչ թե ինկուբատորով, այլ թխականների միջոցով, այդ դեպքում հարկավոր կլիներ ամեն գարնանը ունենալ 2000 թխականներ, վորոնք կարողանային նստել այդ քանակության ձվերի վրա:

Նշանակվում ե, վոր «Հերոլդ» կոմունայում ինկուբատորի ոգնությունը մի կին հնար ունի գարնան ընթացքում այնքան ձու դնելու, վորջան կարող են թխականների տակ դնել գյուղացիական անհատական տնտեսությունները մի ամբողջ գյուղում:

Այս տեսակ մի ինկուբատորի շտրհիվ կարելի չե ամբողջ գյուղը ազատել թխականներից կախում ունե-

նալուց, գյուղին տալ վաղ գարնանը վառեկներ և բացի դրանից, այդ տեսակ մեքենան կադատի թըխականերին խնամք տանելուց՝ վոչ պակաս 2000 գյուղացի կանանց:


Այսպիսով ճտեր ստանալու կտելտիով ձևը տնտեսում ե աշխատանքը, տալիս ե վաղ գարնանը ճտեր և ստիպում ե հավերին անել միայն իրենց ոգտակար տնտեսական գործը, այսինքն ձու ածել: Թուխս նստելուց ազատված հավը կարող ե մինչև 30 ձու ածել այն ժամանակում, վոր նա պետք ե թուխս նստի և ճտեր մեծացնի:

ՃՏԵՐԻՆ ՄԵԾԱՑՆԼԸ

Լավ ածան հավը կարող ե առաջ դալ միայն այն տեսակ ճուտից, վորը մեծացվում ե կանոնավորապես, իսկ դա կարող ե լինել միայն այն ժամանակ, յերբ ճտերի վրա հատուկ խնամք ե տարվում:

Գյուղացիական տնտեսության մեջ ճտերին մեծացնում-սնում ե ինքը թխականը և յեթե նա լավն ե, ճտերն ել լավ կլինեն: Դժբախտաբար մեծ մասամբ տեսնում ենք, վոր աշնան մոտ ճտերի կեսը սատկում ե:

Գյուղացի տնտեսիկինը թեև բավական ժամանակ ե կորցնում ճտերի վրա, բայց հաճախ չի իմանում, ծանոթ չե խնամքի ամենահապարակ կանոններին: Որինակ, չի իմանում, վոր չի կարելի կերակրել ճտերին յերկու որից շուտ ձվից դուրս գալուց հետո, վորովհետև դուրս գալուց առաջ ճուտը ծծում ե ձվի դեղնուցը, վոր նրան լիովին բավական ե, վորպես



Նկ. 3. Բրուլերի մեքենան՝ 500 ձվի համար. մեքենան ունի քաղածուխով վառելի փայտան:

անուանդ, յերկու որվա ընթացքում: Իսկ գեղջիկները սկսում են կերակրել իսկույն և յեթ, յերբ ճուտը դուրս է գալիս, ունա չորանում է: Դրա համար ել ճաերից շատ շատերն են սատկում առաջին յերկու որվա մեջ:

Ճտերին փաստակար ե խոնավությունը, իսկ գեղջիկները բաց են թողնում թխականին իր ճուտերով ցողով ծածկված, թաց խոտի վրա: Հետևանքը լինում է այն, վոր ճտերը թրջվում են, մրսում և սատկում:

Իսկ յերբ ճտերին մեծացնում են կոխողում, նրանց խնամում է մասնագետ մի մարդ, վորը սովորել է, գիտե այդ գործը. նա սնում-մեծացնում է վոչ թե 10—15 ճուտ, ինչպես անհատական տնտեսության մեջն է, այլ միանգամից մի քանի հազար ճուտ: Որինակ, Հյուսիսային Կովկասում գտնվող «Կոմունիստական փարոս» կոմունայում 1929 թվի դարնանը սնվում եր 7500 ճուտ, Հատուկ մեքենաները (Բրուդեր) տաքացնում են ճտերին, վորոնք վորոշ ժամանակում կերակրվում են անհրաժեշտ պարենով (նկ. 3): Առաջին 10—15 որը ճտերին անհրաժեշտ է կերակրել որեկան 5—6 անգամ: Դա կարելի չէ գլուխ բերել միայն այն ժամանակ, յերբ ճտերի թիվը մեծ է և հատուկ հսկողություն կա նրանց վրա, ուրիշ խոսքով՝ լայն չափով հնարավոր է դա իրագործել բացառապես կոխողում:

Ճտերին սնելու համար կոխողներում կիրառվող միջոցը ոգնում է մեծացնելու ապագա առողջ և պնդակազմ ածաններ, տնտեսում է կանանց աշխատանքը և ավելացնում է թռչնաբուծության արդյունքը, վորովհետև ճտերը մեծացնելու ժամանակ ավելի քիչ

են մեռնում, քան անհատական տնտեսության մեջ, իսկ հավերը զբաղված չեն լինում իրենց ճաերով, այլ ճու յեն ածում:

ՎԱՌԵԿՆԵՐԻՆ ԽՆԱՄԵԼԸ

Վորպեսզի ստացվի լավ զարգացած ընտիր ցեղական հավ, անհրաժեշտ է հսկել, վոր վառեկները և մատաղահաս աջլորները $1\frac{1}{2}$ — 2 ամսական հասակում իրարուց բաժան ապրեն: Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր այդ հասարակ բանը շատ պատճառներով գյուղացիական տնտեսության մեջ չի կարելի գլուխ բերել: Հո չի կարելի առանձին մեծացնել մի յոթ աջլոր և նույնչափ վառեկ:

Գյուղացիական տնտեսության մեջ չի կարելի այնպես անել, վոր վառեկները և աջլորները բաժանբաժան ապրեն և միաժամանակ ազատություն վայելեն: Դա կպահանջի լրացուցիչ ծախս և ավելորդ խնամք և՛ թռչունների սակավաթիվ լինելու պատճառով՝ չի ծածկվի այն ոգուտով, վոր պիտի ստացվի նրանց իրարուց անջատ պահելով: Դրա համար ել աջլորները և վառեկները շատ ուժ են կորցնում միասին ապրելուց: Վառեկի և աջլորի վաղ գուգորդությունը նույնչափ փաստակար է, վորչափ և գուգորդությունը հորթի և ցուլի, կամ ջահել յեզան և կովի միջև:

Իսկ կոխողներում վառեկներին մեծացնելիս այն ծախսը, վոր արվում է նրանց բաժանելու համար, ավելի աժան է նստում, յեթե բաժանենք այդ ծախսը յուրաքանչյուր վառեկի վրա առանձին-առանձին, և լիովին ծածկվում է վառեկներին անջատ պահելու ոգուտով:


Վառեկների մեջ միշտ լինում են առանձին թույլ թռչուններ, վատ զարգացած, վորոնց չեն պահում սե-
րունդ առաջացնելու համար, այլ ծախում են թռչուն-
ներ կերակրող հիմնարկութիւններին եօան գնով:

Կոլխոզում թույլ թռչուններից կազմում են ամ-
բողջ խումբ, վորը կերակրվում է մյուս թռչուններից
առանձնացրած և հետո ծախում են ուտելու համար:
Յեւ լավելի փող է ստացվում ամեն մի ծախված
թռչունի համար, և՛ ավելի զգալի դումար է ձեռք
բերվում մեծ խումբ թռչուններ ծախելիս, քան թե
մեկ-յերկու գույգ հավ ծախելիս, ինչպես անում են
գյուղացիական անհատական տնտեսութիւնները: «Կո-
մունիստական Փարոս» կոմունան վորոշել և ծախել
է 1929 թվի աշնանը 3000 թռչուն: Ստացված գու-
մարով կարելի յե առնել մի ամբողջ տրակտոր, կամ
25 կով՝ ամեն մեկը 80 ռուբլով:

ՀԱՍՈՒՆԱՑԱԾ ԹՈՉՈՒՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնակարանը: — Գյուղացիական մասնավոր
տնտեսութեան մեջ հավը անխնամ է: Իհարկէ, ամեն
գյուղացի կարող է շինել իր բակում մի վորևէ ան-
կյուն հավերի համար, կամ փարախում և կամ մի այլ
տեղ և այդ շինված անկյունը մեծ առաջադիմութիւն
կարող է համարվել թռչնաբուծութեան գործում: Բայց
վոչ ամեն մի գյուղացիական տնտեսութիւն հնար
ունի բուն շինելու իր հավերի համար, վորովհետև
սակավաթիւ թռչունների համար հավաքուն շինելը
խիստ թանգ է նստում: Հավը չի կարող այդ ծախսը
հանել: Բայց յերբ տնտեսութեան մեջ շատ թռչուն

կա, այն ժամանակ նրանց համար շինվող կուլտու-
րական բնակարանների ծախսը մեծ շահով յետ է
գալիս: Հյուսիսային Կովկասի «Կոմունիստական Փարոս»
կոմունան 1929—1930 թվի ձմեռանը պահում էր 2000
հավ: Այդքան թռչուն չի կարելի պահել վորտեղ վոր
պատահի, անհրաժեշտ է շինել նրանց համար բնա-
կարան: Հետևաբար՝ կոլխոզում հանդամանքների պա-
հանջով սկսվում է նպատակահարմար և կուլտուրական
խնամք թռչունի վրա, վորը այդ պատճառով սկսում
է մեծ արդյունք տալ (նկ. 4):



Նկ. 4. Թռչնատուն 1,500 հավի համար:

Հաշվով — անհրաժեշտ է պահել ամեն մի քառա-
կուսի մետրի վրա 3 թռչուն — հավ և բադ, — իսկ
խոշոր թռչունների համար, — սագերի և հնդկահա-
վերի, — ամեն մեկին մի քառակուսի մետր:

Կոլխոզում մեծ քանակութեամբ թռչուն ունենալու
դեպքում, բացի թռչնատնից, շինվում է նաև հատուկ
շինութիւն հիվանդ թռչունների համար: Բոլոր հիվանդ

Թոշուհներին իսկույն հեռացնում են առողջներին և պահում են առանձին, մինչև վոր կառողջանա, իսկ գլուղացիական տնտեսության մեջ հիվանդ Թոշուհը ապրում է առողջի հետ, մինչև վոր կսառկի, իսկ մինչև այդ՝ վարակում է մի քանիսին եւ։ Ամենից հաճախ հավերը սատկում են «հավի խոլերայից», լորձաթաղանթի դիֆտերիտային բորբոքումից, Թոքախտից և այլ վարակիչ հիվանդություններից։

ԶԲՈՍԱՆՔԻ ՏԵՂԸ


Գլուղացիական տնտեսության մեջ հավը զբոսնում է բակում, վորտեղ կեր է փնտռում իր համար, դուրս է գալիս փողոց և յերբեմն ել մտնում է բանջարանոց։ Իսկ յեթե բանջարանոցում տնկած են արմատապտուղներ կամ պտղատու թփեր, այդ դեպքում հավին փախցնում են այնտեղից ինչով վոր պատահի և նա ստիպված է լինում բավականաճախ բակով և փողոցով։ Բայց միշտ բակում և փողոցում հարկավոր չափով խոտ չի լինում։ Հաճախ պատահում է, վոր կանաչը քիչ է լինում և հավը ստիպված է լինում թափառել չոր գետնի վրա և կեր փնտռել։ Այն ինչ խոտատեղի հավը ուտում է վոչ պակաս քան մյուս բոլոր կերը։ Դրա համար ել յեթե հավը հարկավոր չափով խոտեղեն չի ուտում, նրա աված արդյունքն ել պակաս է լինում։ Յուրաքանչյուր գլուղացիական տնտեսություն, յեթե ուզենա, կարող է իր տնային Թոշուհներին տալ խոտեղեն սնունդ, բայց դա պահանջում է ավելորդ ծախս և ժամանակ, ուստի սովորաբար այդ չի արվում և հավերը մնում են առանց

անհրաժեշտ խոտեղեն սննդի և նրանց արդյունավորությունը պակասում և դրանից։

Կուրեկտիլ տնտեսության մեջ, վորտեղ Թոշուհների թիվը մեծ է, նրանց հատկացվում է զբոսանքի համար առանձին հողաբաժին։ Հո չի՞ կարելի բաց թողնել ամբողջ տնտեսության հողի վրա 1000—2000 հավ։ Նրանք վտանատակ կտան ագարակների բոլոր ցանքսերը և պատահած տեղը ձու կածեն։ Այսպիսով մենք տեսնում ենք, վոր խոշոր Թոշնաբուծական տնտեսության կուրեկտիլ և կուլտուրական ձևը ունի աշխարհ և անլիճելի առավելություններ անհատական հավաբուծության դիմաց։

Զբոսանքի տեղը Թոշնատան մոտ է լինում և պիտի ունենա ամեն մի Թոշուհի համար 8 քառակուսի մետր։ Յեթե պայմանները ներում են, կարելի յե մեծացնել զբոսանքի հրապարակը։ Վորպեսզի Թոշուհը չփախչի և չանցնի ցանքսերի վրա, զբոսանքի տեղը պատում են յերկաթաթելի ցանցով կամ մի ուրիշ բանով 2 մետր բարձրությամբ։

Զբոսանքի տեղը ցանկապատով բաժանում են յերկու հավասար մասերի։ Յերբ Թոշուհները զբոսնում են մի մասում, մյուս մասը այդ ժամանակ «հանգստանում է» և նրա վրա աճում է խոտը։ Յերբ խոտը բավականաչափ բարձրանում է, Թոշուհներին բաց են թողնում այնտեղ, իսկ առաջին մասը սկսում է հանգստանալ և այլն։ Վորպեսզի միշտ հարկավոր չափով կանաչ լինի զբոսանքի տեղը, այնտեղ մի վորևե բույս են ցանում։ Լավ կլինի, յեթե ցանեն առվույտ (յոնջա), վիկ, վարսակ և այլն, վոր հավերը շատ եր սիրում։




Նկ. 6. Վառելիքի մեծացնելու համար այգու մեջ ընտրած զբոսանքի տեղ:

Թռչնատունը և զբոսանքի տեղը ընտրում են այնպիսի վայրում, վորտեղ խոնավություն չկա: Կալ կլինի, յեթե զբոսանքի տեղում լինեն թիեր կամ վորևե ծառեր, վորոնք կազատեյին հավերին տոթից և գիշատիչ թռչուններից (նկ. 6): Թռչունների զբոսանքի տեղում աղբ ու կեղտ չպիտի լինի: Շատ թռչուն ունեցող կոլեկտիվ տնտեսության մեջ հավերի զբոսանքի համար հատկացնում են այգիները, վորտեղ թռչունները ունենում են մտային սնունդ (բզեղներ, վորդեր, թրթուռներ), պոկում-ուտում են կանաչեղենը և ոգտվում են հովից տաք որերին: Այսպիսով կրկնակի ոգուտ ե ստացվում. և՛ թռչունն ե կերակվում և՛ այգին ե մաքրվում փասակար վորդներից: Զբոսանքի վայր մեծ ոգուտով կարելի յե դարձնել հացահավաքից հետո հնձած տեղերը: Բերքահավաքից հետո հողի վրա թափվում են մեծ քանակությամբ հասուն հացահատիկներ, վոր կարող ե հավաքել միայն թռչունը:

Դրա համար գոյություն ունեն վորքիկ շարժական թռչնատներ (անիվների կամ ձողերի վրա դրած): Ամեն մի այս տեսակ տնակի մեջ տեղավորվում են 40—100 հավ (նկ. 7): Այդ տնակներում թռչուններին տանում են դաշտը և նրանք, զբոսանելով հնձած տեղերում, հավաքում-ուտում են վայր ընկած հացահատիկները, պոկում-ուտում են խոտը, վորչնացնում են աղբախոտը և մեծ քանակությամբ միջատներ: Յերբ թռչունները ուտում են ամեն ինչ և մաքրում են մի վորոշ տեղ, նրանց տեղափոխում են մի ուրիշ տեղ: Տնային ջահել թռչունը հնձած տեղում ավելի արագ ե աճում, քան թռչնաբուծական ազարակում հաս-

կացված գլխաւոր տեղում: Այսպիսով բերքահաւաքից հետո, յերբ ոգտագործում են հնձած տեղերը, միանգամից յերեք շահ ե ստացվում, 1) հավը մի-յերկու ամիս ձրի սնունդ ե ստանում, 2) վոչնչաց-նում ե միջատներին ե աղբակույտերը ե 3) հնձած դաշտերում աճող վառեկներից ստացվում ե առողջ, ամրակազմ ցեղական թռչուն:



Նկ. 7. Շարժական թռչնատուն՝ հնձած դաշտը տանելու համար:

ԽՆԱՄՔ

Ամենքին ել հայտնի յե, վոր յեթե կովը մնա առանց հովվի, դրանից ոգուտ չի ստացվի, դրա հա-մար ել գյուղացիները իրենց ամբողջ գյուղի կովերի համար վարձում են հովիվ, վորը ամբողջ ամառը հսկում ե նախիրի վրա: Ամեն գյուղացի գիտե, վոր

դրանից միայն շահվում ե ինքը: Յերեակայել անգամ չի կարելի, թե ինչ կլիներ, յեթե ամեն մի գյուղացի ինքը արածացներ իր կովը: Բայց թռչունների վրա գյուղացիական տնտեսութեան մեջ իդուր տեղը վառ-նվում ե բավական աշխատանք ե ժամանակ: Ամեն մի գեղջկուհի խնամք ե տանում հինգ կամ տասն հավի վրա, այն ինչ կոխողում մի մարդ խնամում ե առնվազն հինգ հարյուր թռչուն, իսկ յեթե թռչնա-բուծութեան մեջ մտցվի մի չնչին մեխանիզացիա, կա-րող ե խնամել ե 1000 թռչուն: Ասենք ե այն, վոր կոխողում թռչունների այդ ահագին քանակութեանը մի մարդու կողմից խնամվում ե ամելի լավ, քան 5—10 հավը գյուղացիական անհատական տնտեսու-թեան մեջ:

Կոխողներում ամեն ինչ հարմարեցված ե թռչնին խնամք տանելու համար: Գիշերը բոլոր հավերը նստած են թափի վրա, վոր շինված ե լինում թռչնա-տան հյուսիսային մասում, հատակից մոտավորապես 1 $\frac{1}{4}$ բարձրութեամբ: Վորպեսզի թռչունները չկռվեն բարձր տեղերի համար, բոլոր թափերը շինվում են միահավասար բարձրութեամբ: Յերեկով թափերը վերց-վում են, վորպեսզի նրանց վրա չնստեն թռչունները: Ամեն որ ծեռուր մաքրում են, դրա համար ել թա-փերի տակ ձգում են կամ խսիր, վորը առավոտները դուրս են տանում թռչնատանից ե մաքրում են ծեռուից ե կամ թափերի տակ, մոտավորապես 15 — 20 սանտի-մետրներքե, շինում են տախտակներից ամուր հատակ, վորից ամեն որ քերում են ծեռուր ե դուրս տանում:

Հատակի վրա միշտ պիտի փռած լինի մաքուր, լավ դարման, վորը կեղտոտվելու դեպքում պիտի

փոխվի: Դա լինում է մոտավորապես 10—14 ուրբ մի անգամ: Թռչնատանը դնում են արկղ՝ լիքը չոր մոխիրով կամ ճանապարհի փոշով, վորի մեջ լողանում է հավը և դրանով ազատվում միջատներից: Տարվա մեջ մի քանի անգամ Թռչնատան ողը հիմնավորապես մաքրում են կամ կրով և կամ այլ՝ վարակվելուց ազատող նյութերով: Թռչնատան մեջ պիտի լինեն հարկավոր չափով բներ, վորտեղ հավը ձու յե ածում. դրանք այնպես են շինված, վոր հավը ինքն է մտնում բունը, բայց առանց մարդկային ոգնության այնտեղից չի կարող դուրս գալ: Թռչնաբուծը հանում է բնից հավին, նայում է նրա համարին և հասարակ մատիտով ձվի վրա գրում է այդ համարը: Հավի համարը՝ գրված է մի ողակի վրա, վոր անց են կացնում հավի վոտից:

Թռչնաբուծը իմանում է, թե վոր հավերը և վոր որերն են ձու ածել, — գրում է դա առանձին մատյանի մեջ և դրանով վորոշում է, թե ամեն մի հավ ինչքան ձու յե ածել ամեն ամիս և ինչքան՝ մի տարվա մեջ: Ամեն տարվա վերջում, աշնանը պարզվում է, թե վոր հավն է շատ ձու ածում և վորը՝ քիչ: Քիչ ձու ածող բոլոր հավերին ջոկում են և բոլորովին հեռացնում են Թռչնաբուծական ագարակից և ձմեռը թողնում են միայն լավ ածանների: Այսպիսով կանոնավոր խնամք ունեցած դեպքում կոխողում չեն պահում քիչ ձու ածող անողուտ հավերը: Կոխողային Թռչնի ձու ածելու չափը կանոնավոր խնամքի դեպքում յուրաքանչյուր տարի բարձրանում է:

Բները միշտ շինված են մաքուր հարդից: Ձվերը վերցվում են մաքուր ձեռքերով և պահվում են մա-

քուր զամբյուղներում, վորոնք դրվում են մաքուր ող ունեցող և վատ հոտերից ազատ պահարաններում:

Այսպիսով կոխողները ավելի լավ ձու յեն մատակարարում ձու պատրաստող պահեստներին, քան գյուղացիական տնտեսությունները: Իսկ լավ ձուն, իհարկե, ավելի մեծ արժեք ունի:

ՍՆՈՒՆԴԸ

Շատ հազիվ է պատահում, վոր գյուղացու տնտեսության մեջ հատուկ սնունդ պատրաստեն տնային թռչունների համար: Սովորաբար նրանք կերակրվում են նրանով, ինչ վոր գտնում են կամ դողանում են ձիու կերից, կամ մտնում են բաց սարայը և այլն: Գյուղացու Թռչունը միշտ քաղցած է, միշտ փնտռում է, վոր մի բան գտնի, ուտի և նրա սնունդը միշտ պակաս է ու նա չի կարողանում հարկավոր արդյունքը տալ:

Կոխողի կանոնավոր դրված Թռչնաբուծական ագարակում Թռչունը ստանում է կանոնավոր, անհրաժեշտ սնունդ: Առավոտները և յերեկոները Թռչնատան հատակի վրա ձգում են կերը: Թռչունը փնտռում-գտնում է հատիկները, փնտռում է խսիրի մեջ և այդպիսով կատարում է անհրաժեշտ շարժումները: Ամբողջ ուր Թռչնատանը դրված է կերակրի ամանը՝ լի ալյուրի չոր խառնուրդով, վորից Թռչունը ողտվում է ըստ իր ցանկության: Այդ խառնուրդի մեջ կա թեփ, աղած վարսակ և այլ հացահատիկների աղվածքներ, բացի դրանից՝ մսի և վոսկորի ալյուր, վոր անհրաժեշտ է ածան հավերին ձու առաջացնելու համար:

Վոսկորի ալյուրի տեղ առլիս են ծեծած վոսկոր, վոր ծեծվում է հատուկ մեքենայով: Գյուղացիական

անհատական տնտեսությունը միջոց չունի ձեռք բերելու այդ տեսակի մեքենա (костедробинка) իր թոշուկների համար, բացի այդ, մեքենան ձեռնառնողի նաև այն պատճառով, վոր մեծ մասամբ պետք է անպորժ ընկած մնա:

Կոլխոզային թոշնատներում առանձին ամանների մեջ ածում են գետից վերցրած կոշտ ավազ, վորը հավին աստամների տեղ ե ծառայում և նրա ջրոտ ստամոքսի մեջ մաքրում ե կերածը: Տալիս են մանր աղած ձվի կճեպ, խեցի կամ հանգցրած կիր, վորոնք անհրաժեշտ են հավին՝ նրա ձվի կճեպի համար: Զահել, մեծացող սերունդը դործ ե ածում այդ ամենը իր փոսկորները աճեցնելու համար: Բացի դրանցից, տալիս են մանր աղած, լավ այրված փայտի ածուխ, վորը լավ ազդում ե թոշնի մարսողության վրա և նրա մարսողական որգանները (մարմնի մասերը) ազատում ե վարակվելուց:

Բացի հիշած սննդից, թոշուկը ամբողջ տարին ստանում ե կանաչեղեն. ձմեռը ստանում ե արմատապտուղներ, արհեստական ձևով բուսցրած վարսակ, խոտի փշրանքներ և այլն, իսկ ամառը հավը անհրաժեշտ կանաչեղենը ստանում ե իր զբոսանքի տեղերում, իսկ յեթե դա բավական չե, այն ժամանակ նրան տալիս են մանր կտրտած հնձած խոտ:

Թոշնատներում և զբոսանքի տեղերում միշտ դրված են լինում ջրի ամաններ մաքուր, թարմ ջրով լիքը, վոր որեկան ամենաքիչը մի անգամ փոխվում ե:

Կանոնավոր դրված կոլեկտիվ թոշնաբուծություն կարելի յե կազմակերպել վոչ միայն կոլխոզում, այլ և ամեն մի ձու յեվ թոշուն արդյունաբերող արտելում և ամեն մի գյուղում: Այն տնտեսությունները, վորոնք ցանկանում են կոլեկտիվ թոշնաբուծություն ունենալ, ընդհանուր միջոցներով շինում են թոշնատուն, կամ հարմարեցնում են դրա համար մի վորևե շինություն: Շինում են կանոնավոր տեղ զբոսանքի համար, կարգի յեն գցում թոշնատան ներսի մասը, նշանակում են իրենց միջից մեկին, վորը յեթե ունի հարկավոր փորձը և գիտությունը, վորոշ վարձատրությամբ պետք ե վարի այդ գործը: Թոշնարանի համար պիտի ձեռք բերել բարձր վորակի ցեղական թոշուն, վորը ամենից հարմար ե տվյալ ռայոնի համար: Յեթե այդ չի կարելի անել, այն ժամանակ վերցնում են հենց տնտեսություններից լավագույն թոշուկներին: Նրանց կերակրելու համար կատարում են ընդհանուր ցանք և միասին մշակում են վորոշ հողամաս: Այդ հողամասի ամբողջ բերքը ծառայում ե վորպես սնունդ թոշուկների համար: Թոշնաբուծության ինվենտարը (ինկուբատոր, բրուդեր և այլն) ձեռք ե բերվում կամ ընդհանուրից հավաքած միջոցներով և կամ ի հաշիվ հատուկ վարկի (կրեդիտ), վորը ստացվում ե թոշնարանը ձեռնարկողների ընդհանուր պատասխանատվության դիմաց: Այդ տեսակի թոշնաբուծությունից ստացված արդյունքը բաժանվում ե բոլոր մասնակցողների մեջ, ըստ վորում առաջին նվազ միջոց ե հատկացվում թոշնարանի աշխատանքները մեծաց-

ներու և ծափալելու գործին: Այդ ձևով կազմակերպված կոլեկտիվ թոչնարանը կարող ե աշխատել հետևյալ դեպքերում. 1) յերբ թոչնարանին մասնակցող անդամները իրենց անհատական տնտեսության մեջ չեն պահում թոչուններ, այլ իրենց բոլոր թոչունները հանձնում են կոլեկտիվ թոչնարանին և 2) յերբ թոչնարանի անդամները, բացի կոլեկտիվ թոչնարանում գտնված թոչուններից, ունեն թոչուններ նաև իրենց անհատական տնտեսության մեջ:

Յերբ թոչնարանը աշխատում է առաջին պայմանով, այդ դեպքում թոչնարանի անդամները կապվում են նրա հետ միայն այնքանով, վոր մասնակցում են թոչնարանին սնունդ հայթհայթելու մեջ և տարվա վերջին ստանում են իրենց հասանելիք արդյունքը:

Յերկրորդ դեպքում անդամների կապը թոչնարանի հետ ավելի բարդ է, վորովհետև լավ կազմակերպված թոչնարանում պիտի լինի ինկուբատոր, վորը ճտեր է հանում վոչ միայն իր ագարակի համար, այլ և շրջապատող բնակչության համար. այդ թոչնարանը, ընդհանուր հիմունքներով, պիտի ճտեր հանի նաև իր անդամների համար: Մի որական ճտերը նա տալու յե բնակչությանը և իր անդամներին, վորոնք պիտի մեծացնեն ճտերին: Թոչնարանի կանոնադրության մեջ պիտի մտցնել մի կես, վորի հիման վրա թոչնարանի ամեն մի անդամ պարտավորվում է իր անհատական տնտեսության մեջ հաշվի առնել լավ ածան հավերին և, վորոշ վարձատրությանը, սալ նրանց թոչնարանին:

Պետք է ասել, վոր թոչնարանի աշխատանքը յերկրորդ դեպքում չափազանց բարդ է և չի հասցնում գյուղացիական տնտեսությունները կուլտուրա-

կան, արդյունավոր թոչնաբուծության գործում ամբողջ 100%-ին: Դրա համար ել առաջին դեպքը, յերբ բոլոր թոչունները գտնվում են կոլեկտիվ թոչնարանում, ավելի լավ է և նպատակահարմար յերկրորդից:

Առաջին դեպքում թոչնարանի անդամները ամեն կերպ ձգտելու յեն լայնացնել և բարելավել թոչնարանի աշխատանքը, ուստի հարկավոր չե կազմակերպել թոչնարանների յերկրորդ ձևը:

ԱՍԵՆԱՇԱՀԱՎԵՏ ՑԵՂԱԿԱՆ ՅՈՉՈՒՆՆԵՐԸ


Ընդհանրապես մեր հավը մանր տեսակի յե, քիչ ձու յե ածում և ուրեմն քիչ արդյունք է տալիս: Լավ սննդով կարելի յե բարձրացնել նրա արդյունավորությունը, բայց և այնպես նա չի կարող այնչափ արդյունավետ լինել, վորչափ, որինակ ազնվացեղ բող-այլանդը, ճերմակ լեզգորնը և ճերմակ վիանդոտը: Ծիշտ է, յեթե ամեն տարի հասարակ թոչուններից պահեն ձմեռը ամենալավ ածաններին, միջանի տաբուց հետո հետևողական և կանոնավոր աշխատանքի միջոցով դրանցից կարելի յե ստանալ այնպիսի ածաններ, վորոնք իրենց արդյունավորությունը յետ չեն մնա ազնվացեղ հավերից, բայց դրա համար հարկավոր է լուրջ և մանրակրկիտ աշխատանք յերկար տարիների ընթացքում:

Ավելի լավ է, վոր կուլտուրական թոչնաբուծություն սկսող կոլխոզը միանգամից ձեռք բերի ազնվացեղ թոչուններ և իր հետագա աշխատանքները վարի միմիայն նրանց հետ:

Կոլխոզը հեշտությամբ կարող է ազնվացեղ թոչուններին պահպանել հասարակ թոչունների հետ

զուգորդելուց: Կոլխոզային թռչնաբանը հեռու պիտի լինի գյուղացիական անհատական տնտեսություններից, վորտեղ կան հասարակ թռչուններ, իսկ իրա՝ Կոլխոզի մեջ հասարակ թռչուններ չպիտի լինեն:

Բոլորովին այլ պատկեր ենք տեսնում գյուղացիական անհատական տնտեսության մեջ: Այստեղ շատ դժվար է պահպանել թռչունների ազնվացեղությունը: Յեթե մի վորևե գյուղացիական տնտեսու-




Նկ. 8. Ռոդ-այլանդ ցեղի հավեր:

թյուն ձեռք կբերի ազնվացեղ արդյունավետ հավեր, իսկ հարևանները կունենան հասարակ աքաղաղներ, այն ժամանակ կգա մի որ, վոր տեղի կունենա արագ ալյասեռումն և 3—4 տարուց հետո ազնվացեղ թռչունների հետքն ել չի մնա, վորովհետև հարևան հասարակ աքաղաղները միշտ հնար են գտնելու զբոսնելու ազնվացեղ հավերի հետ և զբանց ճտերը լինե-

լու յեն ավելի վատ տեսակի, փոխանակ ազնվացեղի: Անհատական տնտեսությունները կարող են պահպանել թռչունների ցեղը միայն այն—ժամանակ, յերբ գյուղի բոլոր հասարակ աքաղաղները կփոխարինվեն ազնվացեղ աքաղաղներով:

Մեր Միության մեջ թռչնաբուծության պլանային աշխատանքները սկսվել են ընդամենը 2—3 տարի սրանից առաջ, իսկ մինչև այդ ուշ չեր տարձվում: Բավական



Նկ. 9. Ճերմակ վեհնդոտ ցեղի հավեր:


ե ասել, վոր Մոսկվայի թռչնաբուծության ընկերությունը, վորը տարածում է իր ցեղական թռչունները Միության բոլոր մասերը, 1927 թվին ուներ հավերի 29 ցեղեր և այդ բոլոր խառնիճադանճ ցեղական թռչունները նա աշխատում էր տարածել ինչպես սիրող թռչնաբուծների մեջ, նույնպես և առանձին գյուղացիական տնտեսությունների մեջ:

Յեւ միայն 1929 թվին մոցվեց պլան թռչնաբուծութեան գործի մեջ և այդ ժամանակից կանգ առան չորս ցեղի վրա, վորոնք այժմ ճանաչված են ամենաշահավետը Խորհրդային Ռուսաստանում տարածելու համար:

1928 թվի հոկտեմբեր ամսում Հողօդկոմի Կենդանաբուծութեան բաժանմունքում վորոշվեց, թե վոր շրջաններում և ինչ ցեղի թռչուններ պիտի տարածվեն: Այդ վորոշումը հաշվի յե առել առանձին ցեղերի հարմարվելու ընդունակութունը վորոշ շրջանների, կլիմայական պայմանները, նրանց տնտեսական շահավետութունը, նաև այս կամ այն ռայոնում գոյութուն ունեցող հավի ցեղերը:

Այդ տեսակ ռայոնների բաժանելու տնտեսական նշանակութունը Հանրապետութեան համար կայանում է նրանում, վոր յեթե մի վորևե ռայոնում, վորտեղ պատրաստում են ձու և թռչուն, գյուղացիական հավի բարելավութունը կառավարան միայն մի ցեղի ոգնութեամբ, այլ վոչ թե մի քանի, ինչպես վոր առաջ եր, — այդ դեպքում վերջիվերջո ռայոնում կլինի միատեսակ ձու, վորը հարկավոր չի լինի մանրակրկիտ ձեռվ տեսակների բաժանել, ինչպես վոր լինում է բազմատեսակ ձվեր յեղած ժամանակ: Այդ ռայոնում աշնանը թռչուններ կերակրող հիմնարկութունները կմտնեն միատիպ թռչուններ, վորոնց կերակրելը ավելի եժան կնտի, իսկ արդյունքը կստացվի լավ, վորովհետե գյուղացիները միացեղ թռչուններ կտան, իսկ այդ նշանակում է, վոր բոլոր հանձնած թռչունները մոտավորապես միատեսակ են մարսելու և ընդունելու մնունքը: Տեսակների բաժանելը լինելու յե միմիայն

ըստ հասակի և սեռի: Այդ կերակրող հիմնարկութուններում ստացվող փետուրը և բմբուլը, ինչպես նաև հենց իրենց՝ գյուղացիների պատրաստածները մի գույնի կլինեն: Այս բոլորը, — ձուն, մորթած թռչունը, փետուրը և բմբուլը, — այս դեպքում ավելի արժեքավոր կլինեն:




Ն. 10. Ճերմակ լեզգորն ցեղի հավեր:

Վերը հիշած խորհրդակցութունը վորոշել և գյուղացիական թռչնաբուծութունը լավացնել հետևյալ ցեղերի ոգնութեամբ. ոռոգ-այլանդ, ճերմակ վիանդոտ, ճերմակ լեզգորն, շերտավոր պլիմուտրոկ, ըստ վորում այս կամ այն ցեղի տարածման դեպքում խորհրդակցութունը հանձնարարում է՝ ձգտել համատարած ձևով լցնել ռայոնի կամ շրջանի հնար յեղած չափով մեծ մասը ընտրած ցեղով: Հավի ամեն մի ցեղը պիտի բռնի հատուկ վայր և այդ վայրում ռւրիչ ցեղի հավեր պահելը թույլ է տրվում վարպես բացառութուն:

Միության վորոշ շրջաններում կարելի չե զարգաց-
նել վորոշ ցեղ, վորը ընտրում ե գիտակ թռչնաբույժը՝
ըստ տեղական կլիմայական պայմանների:


Թռչնաբուծական Միությունը ներկայումս աշխա-
տում ե յերեք հիմնական ցեղերի վրա. ուղ-ալլանդ,
ձերմակ վիանդոտ և ձերմակ լեզգորն: Դրանց տարա-
ծելը, կամ ավելի ճիշտն ասած՝ բաշխումը տեղի յե
ունենում միմիայն կոլխոզների ու ձու և թռչուն
պատրաստող կոոպերացիայի մեջ:



Նկ. 11. Շերտավոր պլիմուտի ցեղի հավեր:

Բոլոր ցեղական ապրանքը, — ձուն, ձտերը և թռչուն-
ները, — կենտրոնական Թռչնաբուծական Միությունը
բաժանում ե Միության շրջանային բաժանմունքներին,
վորոնք այդ ապրանքը տալիս են գլխավորապես կոլխոզ-
ներին: Բացի դրանից, ցեղական ապրանքը բաց ե թող-

նվում խոշոր ռայոնական թռչնաբուծական՝ կայարան-
ներին կից գտնվող ընկերություններին, վորոնք իրենց
կողմից տալիս են այդ ապրանքից ձու և թռչուն արդյու-
նաբերող արտելներին և միայն այդ վերջիններին միջո-
ցով ցեղական ապրանքը կարող ե մտնել գյուղացիա-
կան տնտեսության մեջ: Ցեղական ապրանք ստանա-
լու համար թռչնաբուծական Միությունը հայտա-
բարություններ և պատվերներ ընդունում ե միայն




Նկ. 12. Ալյոլի ձերմակ հավեր:

իր շրջանային բաժանմունքներից: Հետևաբար ձու և
թռչուն արդյունաբերող կոոպերացիայի ստորին ցանցի
բոլոր պահանջները, ինչպես և նման արտելների պա-
հանջները ուղարկվում են կայարանին կից գտնվող
թռչնաբուծական ընկերություններին, վորոնք ուղար-
կում են այդ պահանջները թռչնաբուծական Միու-

թյան շրջանային բաժանմունքներին և միայն դրանից հետո այդ պահանջները ընկնում են կենտրոնական թռչնաբուծական Միության գրասենյակը:

Դրա համար ել, համաձայն ձու և թռչուն արդյունաբերող կոոպերացիայի սխառեմին, ցեղական ապրանքի և թռչնաբուծական ինվենտարի մեծ մասը թռչնաբուծական Միության գծով կարող են ստա-



Նկ. 13. Վորոնեժի հավեր (ըստ Ֆերդինանդովի):

նալ միայն այն դյուղացիական տնտեսությունները, վորոնք անդամ են ձու և հավ արտադրող արտելներին:


Ինկուբատորների, բրուդերների, ելեվեյների և այլ թռչնաբուծական խոշոր ինվենտարի բաշխումը կատարվում է նույն ձևով, ինչպես ցեղական ապրանքի բաշխումը:

ԻՆՁ ՏԵՍԱԿ ԹՈՉՈՒՆ ՊԵՏԲ Ե ՊԱՆԵԼ

Թռչնաբուծության վերակառուցման համար մեղանում ամենից առաջ հարկավոր է շատ արդյունք

տվող հավ: Քիչ արդյունք տվող թռչունը, վորը վոչ միայն շահ չի բերում, այլ և յերբեմն չի ծածկում իր վրա արված ծախսերը, մեզ շատ հեռուն չի տանի: Անկարելի է մանավանդ խոշոր թռչնաբուծական տնտեսություն կազմակերպել քիչ արդյունք բերող անոգուտ ածաններով:

Դրա համար ել թռչնի ցեղի ընտրության հարցը ներկայումս առաջնակարգ նշանակություն ունի: Այդ




Նկ. 14. Վորոնեժի ճերմակ հավեր (ըստ Ֆերդինանդովի):

հարցը նախորոշում է թռչնաբուծական աշխատանքը վոչ միայն այսորվա վերաբերմամբ, այլ և առաջիկա 4—5 տարվա նկատմամբ:

Մինչև այժմ այդ հիմնական հարցի շուրջը դոյություն ունեւ յերկու հակառակ կարծիք, վոր բաժանել եր թռչնաբուծությամբ պարապողներին յերկու համարյա թշնամի բանակի:

Առաջին խումբը ապացուցում էր, վոր միայն արատասահմանյան հավերն են արդյունաբեր, վոր մեր հավերը պիտի փոխարինել արատասահմանից բերված հավերով և վոր ոռոսական հասարակ և անարդյուն հավերից պիտի ձեռք քաշել:



Նկ. 15. Յուրովսկի ձախեղ աքիբներ (մատիտով նկարածից ետոնված):

Յերկրորդ խումբը ապացուցում էր, վոր բոլոր ուշադրությունը պիտի կենտրոնացնել ոռոսական հավի վրա, վորովհետև մինչև այժմ նրա վրա վոչ վոք լուրջ ուշադրություն չի դարձրել և թերևս այդ հավերի մեջ կան առանձին ածանցներ, վորոնք կարող են մրցել արատասահմանյան բարձրարդյուն հավերի հետ: Թե մեկ և թե մյուս խմբի կարծիքները ունեն շատ

զրահան կողմեր, բայց միևնույն ժամանակ նրանք յերկուսն ել խոշոր սխալանքի մեջ են ընկնում:

Այդ յերկու խմբերն ել հաշվի չեն առնում թռչնաբուծության կազմակերպության վերակառուցման ամբողջ թափը: Թռչնաբուծության կազմակերպությունը կոլլեկցիներում, արդյունաբերական ինկուբատորների շինությունը, յերբ մի ինկուբատորը կարող կլինի ամեն ոք բաց թողնել մինչև 3000 ձուտ, — սլահանջում ե վոչ թե վիճաբանություն, այլ անհապաղ գործ:

Կասկած չկա, վոր մեր հասարակ ածանց ունի շատ արժեքավոր հատկություններ: Նա կրելով և՛ քաղց, և՛ ցուրտ, չունենալով հարմար անկյուն, մնալով անխնամ՝ հնար ե գտել տարեկան 50—60 ձու ածելու: Յեւ յեթե արատասահմանյան բարձրարդյուն հավին ստիպես ապրելու և «աշխատելու» միևնույն դժոխային պայմանների մեջ, ինչ վոր մեր հավինն ե, այն ժամանակ ոգտակար հավը վոչ միայն կնվազեցնել իր արժեքը, այլ գուցե և չապրեր: Շատ կալվածատերեր, վորոնք մեծ մասամբ գյուղատնտեսական հարցերում տղետ են յեղել, այդ տեսակ դեպքեր շատ են տեսել: Բերել են տվել արատասահմանից թանգարժեք հավեր, դրել են նրանց մեր պայմանների մեջ և նրանք վոչնչացել են:

Նշանակում ե, վոր մեր հավը արժեքավոր ե իր դիմացկունությամբ և գոյության պայմաններին հարմարվելու ընդունակությամբ:

Մեր հասարակ հավերի բազմության մեջ կան առանձին ածանցներ, վորոնք բարձր արդյունք են տալիս, բայց վորովհետև մեզանում տնտեսությունները ածած ձվերի հաշիվը չեն պահում, դրա համար

ել այդ տեսակ ածանցները կորչում են հավերի սահավարդյուն մասնայի մեջ և այսպիսով յերկրում մեր հավի միջին ածանությունը մնում է անփոփոխ:

Իհարկե, յեթե մեր փորձնական կայանները սկսեն վեր հանել հասարակ հավերի արդյունաբերությունը, շատ կարելի յե մի 5 — 10 տարվա համառ ու ջանասեր աշխատանքից հետո նրանք կուրախացնեն մեզ իրենց նվաճումներով:

Մինչև այժմ գոնե բոլոր փորձնական կայանները, թռչնաբանները և առանձին թռչնաբույծները, վորոնք զործ ունեն մեր հասարակ հավի հետ, միսթարական արդյունք չեն տվել: Մամուլի մեջ լուսաբանված նվաճումներ այդ հարցերի մասին չկան:

Իս ցույց է տալիս, վոր նույնիսկ առանձին բարձրարդյուն ածանցները մեր հասարակ հավերի մեջ հաստատորեն չեն տալիս իրենց սերունդներին բարձր արդյունաբերության արժեքավոր հատկությունները: Կամ ինչպես ասում են գյուղատնտեսները, մեր հավերի արժեքավոր հատկությունները հաստատված չեն ու սերունդների մեջ յերևան չեն կարող դալ:

Կարճ է նման պայմանների մեջ մեր յերկրի ամբողջ թռչնաբուծությունը կանգ առնել միայն մեր հավի վրա, միմիայն այն պատճառով, վոր նա սովոր է մեր պայմաններին: Իհարկե վոչ:

Արտասահմանյան հավը մեծ մասամբ ավելի բարձր արդյունք է տալիս, քան մեր հավը և այդ հատկությունը անցնում է սերնդի մեծ մասին: Արտասահմանը ահագին աշխատանք է զործ դրել ամենաշահավետ հավ ստանալու համար և այդ աշխատանքի

վրա նա վատնել է տասնյակ տարիներ շավաղույն փորձնական կայաններում և թռչնաբուծության լավագույն մասնագետների աշխատանքները:

Արտասահմանյան տնտեսությունների մեծ մասը պահում է ձու ածելու հաշիվը և հետևաբար ցեղի համար թողնում է միայն այն հավերին, վորոնք բարձր ածանություն են ցույց տալիս: Միայն ամենաարդյունավոր և առողջ հավերից առաջացած աջաղաղներին են պահում: Այսպիսով, շնորհիվ յերկարամյա համառ ու լուրջ աշխատանքի, արտասահմանը կարող է պարծենալ այնպիսի չեմպիոն (դոչի) ածանցներով, վորոնք տարվա մեջ ածում են 300-ից ավելի ձու, իսկ շատ յերկիրներում ձու ածելու միջին թիվը 2 — 2½ անգամ բարձր է մերից: Յեվ յեթե մենք հրաժարվենք արտասահմանի բազմամյա փորձերից ու յեղած նվաճումներից ոգտվելուց, դա կլինի մեր ամենամեծ սխալը:

Մենք անպայման պիտի առնենք արտասահմանյան փորձից այն, ինչ վոր արժեքավոր է և շարունակենք աճեցնել մեր ցեղական թռչնաբաններում աղնվացեղ բարձրարդյուն արտասահմանյան հավերին: Մեզ չպետք է վախեցնե այն, վոր թռչունը լավ չի հարմարվել գոյության բարբարոսական սրայմաններին, վորովհետև մենք չենք ուզում վարել մեր տնտեսությունը նույն յետամնաց միջոցներով, ինչպես մինչև այժմ եր: Թռչնաբուծության ասպարիզում ել մենք անցնում ենք կուրտուրական տնտեսության, հետևաբար արտասահմանյան բարձրարդյուն թռչնի համար մենք կարող կլինենք ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ լարված արդյունավետ աշխատանքի համար:

Մենք արդեն հրաժարվել ենք արտասահմանից մեծ քանակությամբ ցեղական թռչուն բերելուց, վորովհետև մեր յերկրում մենք ունենք բավարար մեծ քանակությամբ արտասահմանյան թռչուններ, վորոնք բերված են այնտեղից և խնամքով պահվում են մեր կոլխոզներում և մեր սովորական թռչնաբուծ-կոլխոզ-նիկուհիների ձեռքով, Բայց բացառիկ արժեքավոր ցեղական ապրանք մենք բերելու յենք արտասահմանից նրա համար, վորպեսզի այդ ապրանքի բարձր արդյունավորությունը մասնենք մեր արդյունաբերության մեջ:

Դա չի նշանակում, վոր մեր ամբողջ թռչնաբուծությունը մենք հիմնելու յենք արտասահմանյան թռչունի վրա և վոչ մի ուշադրություն չենք դարձնելու մեր հավի վրա: Հարցի այս տեսակ լուծումը աններելի սխալ կլիներ մեր կողմից: Դա նորից կխանգարեր մեր թռչնաբուծությանը՝ անցնելու գյուղական տնտեսության սպառողական-արդյունաբերական ճյուղից ապրանքային-արդյունաբերական ճյուղին:

Մեր յերկրի թռչնաբուծությունը բացառապես արտասահմանյան թռչնի վրա կառուցել մենք չենք կարող, վորովհետև մենք չունենք այնքան ցեղական ապրանք, վոր կարողանանք բավարարել կոլխոզների բազմաթիվ պահանջները, յերբ նրանք ցանկանում են իրենց թռչնաբուծությունը արդյունաբերական հիմքի վրա դնել:

Մեծ քանակությամբ ցեղական ապրանք բերել տալ արտասահմանից մեր հավերին փոխարինելու համար մենք չենք կարող, վորովհետև նախ՝ դրա համար հարկավոր է տնային վալյուտա (փող) և յերկրորդ՝ վոչ մի յերկիր չի կարող տալ մեզ ցեղական

թռչնի այն քանակությունը, վորը հարկավոր է մեզ մեր բոլոր պահանջները գոհացնելու համար:

Հետևաբար մենք գալիս ենք այն յեզրակացության, վոր աշխատանքը մի քանի ուղղությամբ պիտի տանել:

Առաջին՝ մենք պետք է ոգտագործենք արտասահմանյան բոլոր բարձրարժեք թռչունը, այն ցեղերը, վորոնք մեր յերկրի համար համարվում են պլանային և ստեղծենք նրանց համար կուլտուրական պայմաններ՝ նրանց արդյունաբերությունը վեր հանելու համար: Մենք պետք է գործ դնենք բոլոր միջոցները, վորպեսզի վորքան կարելի յե, շատ ցեղական վառեկներ ստանանք այդ թռչունից:

Յերկրորդ՝ մենք պետք է ձեռք առնենք բոլոր միջոցները մեր հավի պահպանության պայմանները լավացնելու համար, դարձնել այդ հարցի վրա գյուղական հասարակական ուշադրությունը և ոգնել պիտենքներին, վոր նրանք կիրառեն իրենց շեփությունը հավի վրա: Ամեն տարի նշանակել լավագույն ածանցերին և ցեղի համար թողնել միայն շատ ձու ածող հավերին: Վաղ ճտեր հանել: Այդ հարցում շատ ուսյոններին կոգնեն խոշոր արդյունաբերական ինկուբատորները, վորոնք սկսել են իրենց աշխատանքը արդեն 1930 թվի գարնանացանից և ամեն մեկը նրանցից գարնան ընթացքում կարող է բաց թողնել տասնյակ հազարավոր ձվեր:

Յերրորդ՝ մենք պետք է ամբողջովին ոգտագործենք ցեղական ավելորդ աքաղաղներին և նրանց ուղարկենք՝ մեր հասարակ հավերից խառնածին սերունդ առաջացնելու համար: Վորովհետև բարձր

ձվաբերութեան հատկութիւնները հավերք տալիս են իրենց տղաներին (աքաղաղներին), իսկ այդ տղաները բարձր արդունավորութեան հատկութիւնները տալիս են իրենց աղջիկներին (հավերին), ուստի այսպիսով միմիայն ազնվացեղ աքաղաղների ոգնութեամբ, վորոնք առաջացել են շատ ձու ածան հավերից, կարելի յե մի քանի տարվա մեջ խիստ լավացնել հասարակ հավի տնտեսական հատկութիւնները: Ծիշտ ե, մենք ունենք թռչնի առանձին ցեղեր, ինչպես որինակ. յուրլովակի ձայնեղները, պեսկովակի, Արցոլի և այլն, վորոնք արտասահմանյան վոչ մի աքաղաղի կարիք չունեն: Այդ ցեղերը տալիս են խոշոր ձվեր, չափ են և, յեթե կանոնավորապես ամեն տարի ընտրութիւն կատարվի ցեղական հավ պահելու համար, — մի քանի տարուց հետո մենք կարող ենք ունենալ արտասահմանի հավից վոչ պակաս հավ, բայց ցավը նրա մեջն ե, վոր այդ ցեղի թռչուններ մեզանում շատ քիչ կան և մեր յերկրի թռչնաբուծութեան մեջ նրանք շատ վորք նշանակութիւն ունեն:

Միայն ամեն ուղղութեամբ ծավալված աշխատանքով մենք կարող ենք իրագործել հայտնի լողունը. «Հասնել կապիտալիստական յերկրների թռչնաբուծութեանը և նրանցից ել անցնել»:

Միայն բոլոր ուղղութեամբ կատարվող լուրջ աշխատանքով մենք կարող ենք բարձրացնել մեր թռչնաբուծութեան «բերքը» մոտակա հնգամյակում՝ առնվազն 30—35 տոկոսով:

Ժամանակը վերջ կդնի անհիմն վեճերին՝ թե վոր թռչնից պետք ե սկսել աշխատանքը: Ժամանակն ե սկսել աշխատանքը ամեն մի թռչնի հետ, նախապատ-

վութիւն տալով նրան, վորը ավելի շատ ձու յե ածում և ամեն մի ձվի վրա ավելի քիչ սնունդ ե վատնում: Անհրաժեշտ ե միայն այդ խնդրում դեկավարվել՝ մի ամբողջ ռայոն և նույն իսկ շրջան միատեսակ ցեղ մտցնելու գաղափարով:

ՀԱՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԻ ՀԱՍԱՐ

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակ հավի բացառիկ քիչ ձու ածելը կախված ե մեծ չափով վոչ թե նրանից, վոր հավը ընդհանրապես սակավարդիւն ե, այլ նրանից, վոր մեզանում ընդունված չե ցեղի համար ընտրել լավագույն ածաններին իր տնտեսութեան մեջ: Անկախած, մեր հավերի մեջ կան աչքի ընկնող ածաններ, բայց նրանք բոլորովին կորչում են սակավարդիւն թռչունների մասսայի մեջ, Իհարկե, հասարակ հավը չի կարող հավասարվել ազնվացեղ ածանի բարձր արդունավորութեանը, բայց ցեղի համար ընտրութիւն կատարելով կարելի յե զգալի չափով բարձրացնել տնտեսութեան մեջ գտնվող հասարակ հավերի ածանութիւնը:

Թե ինչ մեծ հետեանք կարող ե տալ լավ ածանների ընտրութիւնը, կարելի յե տեսնել հետեյալ որինակից: Ամերիկայում ագարակատերերի տնտեսութիւնների մեջ հետեւել և.ն 7532 ածանների, վորոնք 7 որվա մեջ ածել են 17565 ձու, կամ, միջին թվով 2,3 ձու ամեն մեկը: Դրանից հետո կատարվել ե ընտրութիւն բոլոր հավերի մեջ ըստ արտաքին նշանների և տնտեսութիւնների մեջ թողնվել են միայն լավ

ածանները, թվով 3992, մնացածները — 3540 հավ,
կամ 47%, անպետք են համարվել և հեռացվել տնտե-
սություններից: Ազարակներում մնացած 3992 լավ
ածանները հետևյալ 7 որվա մեջ, ընտրությունից
հետո, ածել են 17.205 ձու, այսինքն, 4,3 ձու ամեն
մեկը, այսինքն՝ ընտրությունից հետո ձվերի թիվը
համարյա մնացել է անփոփոխ, իսկ հավերի թիվը
պակասել է համարյա յերկու անգամ: Հետևաբար,
ձվաբերությունը միջին թվով ավելացել է յերկու
անգամ, ամեն մի ձվի ինքնարժեքը պակասել է յերկու
անգամ, իսկ տնտեսության յեկամուտը թռչնաբու-
ծությունից զգալի չափով բարձրացել է:

Խորհրդային Միության մեջ տնտեսությունների
ճնշող մեծամասնությունը վոչ մի ընտրություն չի
անում, իսկ մի քանի ռայոններում, վորտեղ մտցված
եր ձվի և թռչնի պաշար, գյուղացիական թռչունը
կանոնավորապես վոչ թե լավանում եր, այլ վատա-
նում: Դա առաջանում եր նրանից, վոր գնողները չաղ
հավերի համար մի քանի կուպել ավելի եյին վճարում:
Գյուղացիները շատ վորդ ստանալու համար ծախում
եյին գնողներին ամենաշահել, ուժեղ և կատարելա-
պես հասունացած հավերին: Յեւ վորովհետեւ գյուղա-
ցիների մեջ վոչ մի գյուղատնտեսական աշխատանք
չեր տարվում, դրա համար ել ցեղի համար մնում
եյին մանր և ուշ ձու ածող հավերը, վորոնք, բնակա-
նաբար, քիչ ձու եյին ածում:

Այսպիսով ընտրությունը կատարվում եր կարծես
հավերը վատացնելու համար: Ներկայումս պետք է իրա-
կանացնել այս լոգուեզը. «Հոգացողություն արդյունա-
բեր թռչնի համար»: Այդ յերևում է նաև նրանից, վոր

կառավարության պատվերով մոտիկ հնդամյակում
բերքը պիտի ավելանա 30 — 35 տոկոսով, իսկ դա
նշանակում է, վոր պետք է ավելանա վոչ միայն հաճարի
կամ ցորենի բերքն ամեն մի հեկտարից, այլ և պիտի բար-
ձրանա թռչնի «բերքը» նույն ժամանակում առնվազն
30 — 35 տոկոսով: Դրան կարելի յե հասնել վճռական կով
մղելով անարդյուն, նիհար, սակավարդյուն հավաբուծու-
թյան, խնամքով ընտրելով տնտեսության մեջ յեղած
թռչուններից ցեղի համար ամենատոկուն, զարգա-
ցած, ջահել հավերին և լավ ածաններին, վորոնք
բարձր արդյունք են տվել:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Յեղի համար ընտրում են. 1) հին հավերից, վո-
րոնք ձու յեն ածել վոչ պակաս մի տարուց և 2) վա-
ռեկներից, վորոնք նույն տարվա զարնանն են ձվից
դուրս յեկել:

Հին թռչուններից ամենից առաջ պետք է ընտրել
այնպիսիներին, վորոնք յերբեք չեն հիվանդացել:
Հավի ունեցած համարյա բոլոր հիվանդությունները
անդրադառնում են նրա սերնդի վրա և նվազեցնում
են նրա արդյունավորությունը: Հիվանդություն ունե-
ցած հավի սերունդը լինում է թույլ, վախտ և տնտե-
սության համար վնասակար:


Հին հավերից, վորոնք հիվանդություն տեսած
չեն իրենց կյանքում, պետք է ընտրել:

1. Ամենայով ածաններին (յեթե ստուգենք ձու
ածելը: Նկ. 16, 17):

2. Նրանց, վորոնք ձմեռը ձու յեն ածում և գարնանը ամենից առաջ են սկսում ածել:

3. Նրանց, վորոնք ուշ են փետրաթափվում և արագ են վերջացնում այդ:

Բոլոր վատ ածանները ամառը վաղ սկսում են փոխել իրենց փետուրները և կամ ամառվա մեջ և




Նկ. 16. Լավ ածանը յետևից: Նկ. 17. Լավ ածանը առաջից

այդ շարունակվում ե յերկար: Լավ ածանները փետրաթափվում են աշնան սկզբում և նույնիսկ վերջում և շատ շուտով վերջացնում:

4. Առույգ, հարթ և փայլուն փետուրներ ունեցողներին, վորոնք ունեն արագաշարժ, դուրս ընկած

աչքեր և հեշտությամբ իրենց համար սնունդ են ճարում:

5. Վորոնք վոչ մի արտաքին վնասվածք պակասություն չունեն (ցրտից վնասված չեն):




Նկ. 18. Տարածությունը լայն և զոգի վոսկրների մեջ: Լավ ածան է: Նկ. 19. Տարածությունը նեղ և զոգի վոսկրների մեջ: Վատ ածան է:

6. Յեթե ցեղը ունի դեղին վոտներ և կաուց, այդ դեպքում լավ ածանների վոտները, կաուցը և ականջի բլթակները աշնանը ստանում են համարյա սպիտակ գույն, իսկ վատ ածանների այդ մասերը գունավորված են լինում: Նշանակում ե, վոր պետք ե թողնել ցեղի համար նրանց, վորոնք կորցնում են գույնը:

Պուխը	Պուխը և կտուցը	Ցանկի անցքը		Գոգի վոսկոյնները		Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Փետրվարի և փետրվարի վոսկոյնները	Կտուցը և կտուցի վոսկոյնները	Գոգի և կտուցի վոսկոյնները	Գոգի և կտուցի վոսկոյնները
		Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի					
I	Համարված և կտուցի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի
II	Փուխը և կտուցի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի
III	Փուխը և կտուցի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի
IV	Փուխը և կտուցի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի	Ստորագրում 1870 թ. զմայրստիսի գիտն Դ Վեդի

7. Այն հավերհ, լուրնց գոգի վոսկոյնների միջի տարածությունը 3 — 4 մատնաչափ է. վատ ածանցների գոգի վոսկոյնների միջի տարածությունը լինում է 2—1 մատնաչափ (նկ. 18 և 19):

46-րդ յերեսում բերված է աղյուսակ, լուրից կարելի չե ոգտվել ընտրություն կատարելիս և վատերին հեռացնելիս:



Նկ. 20. Լավ տարածություն կրճի վոսկոյնների և գոգի վոսկոյնների մեջ: Լավ ածանց է:

Նկ. 21. Նեղ տարածություն կրճի վոսկոյնների և գոգի վոսկոյնների մեջ: Վատ ածանց է:

Չահել սերնդից պետք է պահել միայն նրանց, լուրնց:

1. Լավ ածանցների ձվից են դուրս յեկել:

2. Ամենավաղ ծնունդ են:

3. Վոսկորների կանոնավոր կազմվածք ունենալը կրծքի վոսկորը (կրծքի վոսկորի վողնը) լավ զարգացած է, ուղիղ և ծռումներ չունի (նկ. 20 և 21), կրծքի վոսկորի ծռումը հաճախ առաջ է գալիս նրանից, վոր թռչունը իր զարգացման ժամանակ ստացել է քիչ նյութ, վորոնցից վոսկոր է կազմվում, դրա համար այդ տեսակ թռչունը կարող է հիվանդանալ վոսկորների թուլությամբ (ռախիտ), վորը ազդում է նրա վոսկորների զրոթյան վրա: Վոսկորները կազմվում են հետևյալ նյութերից. վոսկորի ալյուր, ձվի կճեպ, մանրացրած խեցիներ, հանգցրած կիր և այլն:

4. Լավ կերակրված, ախինջն լավ զարգացած ջլեր ունեցողներին:

5. Կշռում են համարյա այնքան (200 գրամ պակաս), վորքան լավ հին հավերը:

6. Առույզ, կենսուրախ, վառ, փայլուն աչքեր ունեցող և արտաքին վոչ մի պակասություն չունեցողները:

7. Ունեն փայլուն, հարթ և չխճճված փետրավորություն:

8. Ընդհանուր տեսքով նման են լավ ածաններին:

9. Ունեն վոտների բնական դրույթ: Վոտների վառ դրույթ ունեցողները չեն պահվում (նկ, 22):

10. Ընտրած հավերի գլուխը նման չպետք է լինի ազոավի գլխին:

11. Վոտների, կտուցի և փետուրների գույնը համապատասխանում է իր ցեղին:

Յեթե ջահել հավերը չեն համապատասխանում այդ պայմաններին, նրանց չեն պահում, այլ ծախում են ուտելու համար:

Վոչ մի ժամանակ, ինչպես այդ շատերն են անում, չպետք է ծախել ամենաչաղ, ձվից վաղ դուրս յեկած ճուրին և պահել ցեղի համար մանրուքը, ձվից ուշ յեկածներին: Զվից վաղ դուրս յեկածները վաղ ել սկսում են ձու ածել, իսկ ուշ դուրս յեկածները դեռևս զարնան են հասունացած չեն լինում:



Նկ. 22. Վոտների անկանոն, հասունացած չեն լինում: (X) դրույթ:

Ցեղի համար թողած այդպիսիները տնտեսությանը միայն վնաս են բերում:

ԱՔԱՂԱՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Աքաղաղի ընտրությունը ցեղը աղնվացնելու համար ավելի կարևոր է, քան ածանի ընտրությունը: Աքաղաղի վերաբերմամբ ավելի խիստ պահանջներ են դրվում: Աքաղաղը անպատճառ պետք է լավ զարգացած լինի ֆիզիքապես, ուժեղ և անպատճառ լավ ածանից առաջացած: Հավը իր բոլոր ունակությունները տալիս է արու վորդիներին (աջլորներին), իսկ աքաղաղը, իր հերթին, մորից ժառանգած իր հատկությունները տալիս է աղջիկներին (վառեկներին): Լավ ածան մորից առաջացած աքաղաղը տալիս է իր աղջիկներին շատ ձու ածելու ընդունակությունը, իսկ

վատ ածանից առաջացած աքաղաղը, ընդհակառակն, տալիս է աղջիկներին պակասավոր ձվաբերություն:

Իրա համար ել շատ կարևոր է տնտեսության մեջ ունենալ լավ աքաղաղ, իսկ յեթե չկա այդպիսին, այդ դեպքում ավելի լավ է դրսում առնել լավ աքաղաղ, քան թե պահել սեփական վատ աքաղաղին:

Վորպեսզի զարնանը ձվերը լավ սաղմնավորված լինեն, անհրաժեշտ է տարածված ցեղերի համար — ոռոգ-այլանդ, Վիանդոտ, պլիմուտոնկ, յուրլավի — ունենալ յուրաքանչյուր 7 հավին մի աքաղաղ, իսկ թեթև ցեղերի համար, ինչպես որինակ՝ ձերմակ լեզ-դորն և հասարակ մեր ցեղերը, կարելի չէ ունենալ 10 հավին մի աքաղաղ: Բացի դրանից, յուրաքանչյուր 2—3 աքաղաղի դիմաց պիտի ունենալ մի պահեստի աքաղաղ:

Գարնանային ցեղական սեզոնից հետո այն բոլոր աքաղաղներին, վորոնք մի առանձին տնտեսական արժեք չունեն, կարելի չէ վաճառքի հանել, վորովհետև ամառվա ձու դնելու համար աքաղաղը հավի-րին պետք չի և մինչև իսկ խանդարում է հավի բնա-կան աշխատանքներին և նրա ածանությանը, մի քան, վոր հաստատված է բազմաթիվ դիտողների կողմից:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Առաջաբան	1
1. Ճտեր հանելը	3
2. Ճտերին մեծացնելը	6
3. Վառեկներին խնամելը	9
4. Հասունացած թռչունի պահպանությունը	10
Զրոսանքի տեղը	12
Խնամքը	16
Սնունդը	19
5. Կոլեկտիվ թռչնարած	21
6. Ամենաշահավետ ցեղական թռչունները	23
7. Ինչ տեսակ թռչուն պետք է պահել	30
8. Հավերի ընտրությունը ցեղի համար	39
Ընտրության նշանակությունը	39
Ընտրությունը	41
9. Աքաղաղի ընտրությունը	47



15 407.

Це

22.531



И. ПАТРИК
Коллективное и
единоличное
птицеводство
(перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.